

թեան ու բորբոսի պահել իր խոտերը . իսկ իր գտած կերպովը պահեր է շատ տարիներ , և գտած հնարքն է այս : 100 ծանրութիւն խոտին հետը 3 ծանրութիւն աղ խառնելու է դիզելէն առաջ , ու ետքը դիզելու է խոտերը : Եւրոպա աղը միշտ սուղ ըլլալուն համար , կը նային որ աղ գործածելէն ետքը խիստ օգտակար բանի մը համար գործածեն , անոր համար շատերը զանց կ'ընեն աս գիւտս . բայց որովհետեւ արելք աղահանից պատճառաւ շատ տեղ աղը առատ է , և խոտն ալ աւելի հարկաւոր ու պիտանի կրնայ համարուիլ երկայն ձմեռներուն պատճառաւ , խոտը լաւ պահելու համար պէտք չէ խնայել աղին , երբոր ամէն ուրիշ զգուշութիւններով ալ անկարելի ըլլայ խոտը վտանգներէ պահել , որ խիստ շատ են : Ուրիշ կողմանէ ալ աղին կենդանեայ առողջութեան օգտակար ըլլալը ամէնքը փորձով գիտեն , ինչպէս նաև աս գիւտս հնարողն ալ կը վկայէ :

Մենք հոս ուրիշ բան մըն ալ դիտենք . խոտաճարակ կենդանիներ սովորաբար ձմեռները հիւանդութիւն մը կ'ունենան , որուն մերոնք գաւառական բառով լեզու ըլլալ կ'ըսեն . այսինքն հիւանդ անհանոյն լեզուի երակները սե արիւնով կը լեցուին , և լեզուին վրան ալ շթի պէս փշիկներ դուրս կուտայ . որով խեղճ անասունը բան մը չի կրնար ուտել , և թէ ուտելու ալ ըլլայ՝ շատ տանջուելով , կերածէն ոչ համ մը կ'առնէ և ոչ առաջ կուգայ , հապա օրէ օր կը վաստումնայ և ինչուան կը սատկի՝ թէ որ պատճառը չգիտնան և գեղը ընեն : Եւ սովորաբար աս կերպով կը բժշկեն : Ուր ածելիով մը նախ լեզուին վրայի այն սե երակները կը կտրեն որ բոլոր սե արիւնները թափին , և այն դուրս տուած փշիկներն ալ ածելիովքերելէն վերջը , աղով կենդանւոյն լեզուն լաւ մը կը շփեն : Եւ պէս ընելին վերջը՝ մէկէն կ'առողջանայ կենդանին , կ'ուտէ կը խմէ ախորժակալ , և քիչ օրուան մէջ առաջի գիրութիւնը ուժը կը գտնէ : Ես հիւանդու-

թեանս պատճառը ինձի այսպէս հաւանական կ'երևնայ որ խոտին անաղիութիւնն է : Երծող անսամնոց ըլլար , վասն զի արծելու ժամանակ ցուուկնին ինչուան գետինը համնելով , որովհետեւ քիչ շատ միշտ աղիութիւն մը կ'ունենայ հողը , խոտոյն անսաղութիւնը կը բարեխառնի , և առողջ կը մնան . իսկ գերնդիով քաղուած խոտը գրեթէ բոլորովին անաղ կը մնայ և աս հիւանդութիւնը կը պատճառէ անսամնոց : Եւս տի թէ որ խոտին մէջ աղ խառնուելու ըլլայ , կարծեմոր աս վտանգէս ալ կենդանիները ազատ կը մնան :

ԲՆԱԿԱՆ Գ. ՏՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ Գ. ՏՏՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԿԱՆ :

ԲՆԱԿԱՆ կամ զուտ ծծումքին յատկութիւնները ասոնք են . գոյնը հասարակօրէն լեմնի դեղին է , հոտ չունի , շատ դիւրաբեկ է և շուտ կը փշրի , ելեքտրականութեան և ջերմութեան շատ հաղորդող է . եթէ ձեռքիդ մէջ երկար ատեն բռնես՝ քիչ մը կը տաքնայ և կը սկսի ըլլարալ՝ կոտրտելու ձայն հանել . և չուխայով շփես ու թեթև մարմնոց մօտիկցընեսնէ՝ իսկոյն զանոնք կը քաշէ , բայց տկար կերպով . շփելէդ ետեւ պոկունքիդ գպցընես՝ դարձեալ փշրուելու ձայն մը կը հանէ : Ըստ կը հալի , և հալելու ժամանակ կերպ կերպ գոյն կ'առնու . զոր օրինակ հարիւրաման ջերմաչափի 107 աստիճանին կը սկսի հալիլ , կարմրագոյն դեղին կ'ըլլայ և շատ հեղուկ . 260 կամ 270 աստիճանին կը սկսի կարմիր գոյն մը առնուլ և թանձր է . 300^o մօտ կը ցնդի և մանր շամանդաղի պէս գոլորշի կը հանէ , որ Եւրոպացիք ծծմբոյ ծաղէն կը կոչեն , և ասոր գոյնը փայլուն գեղին է : Եթէ 107 կամ 110 աստիճանաւ ծծումքը հալեցընես ամանի մը մէջ և պաղեցընես՝ մինչեւ որ հեղուկին երեսը մաշկ

մը կապէ , և յետոյ երեսը ծակես ու ջրի մէջ շուտ մը թափես , անօթին մէջ ասեղի նման ութանկիւնի ձեռլ թափանցիկ և կակուղ բիւրեղներ կը ձեւնան . և եթէ իւր վիճակին ձգես , մէկ քանի օրէն նոյն ատեզները կը չորնան , թափանցկութիւննին կը կորսրնցընեն , և հասարակ ծծումբի պէս դիւրաբեկ կ'ըլլան : 260 կամ 270 ատտիճաննին խժային վիճակ մը կ'առնու , և գոյնը կը փոխուի . և եթէ նոյն ատենը ջրի մէջ կաթեցընես , ձկան թեփի նման կլոր կլոր գնտակներ կը ձեւնան կամ երկայն թելեր , և այս գնտակներն ու թելերը կակուղ են , առածգական խէժի նման . յետոյ իր վիճակին ձգես նէ՝ դարձեալ մէկ քանի օրէն կը չորնան , գոյնը կը փոխեն և հասարակ ծծումբ կը դառնան :

(Դ ծումբը դիւրաւ կը վառի , բոցին գոյնը կապուտ կարմրագոյն է , և հոտը վատ ու խղգուկ :) ոյն եղանակաւ ծծումբը օդի մէջ որ վառուի՝ մասնաւոր թթու մը առաջ կուգայ , այսինքն ծծումբուտ թթու ¹ , որուն մէջ մէկ մաս ծծումբ և երկու մաս թթուածին կայ . այս թթուն բնալրւծութեան մէջ շատ կը գործածուի , և բժշկութեան մէջ բարի և որդիւնի ² նման հիւանդութեց դէմ կը գործածեն՝ թէ մարդկանց և թէ անասնոց , մանաւանդ շանց . արհեստի ալ օգուտ ունի՝ աղտուղած կերպաներ կտաներ մաքրելու՝ առանց զանոնք ապականելու , մանաւանդ հիւսուած լաթեր մաքրելու համար շատ կը գործածուի :

Դ յու թթուէն՝ ի շատ ծծումբը ուրիշ բազագրութիւններ ալ ունի , որոնց մէ մէկ քանին գրենք : Եթէ մէկ մաս ծծումբը երեք մաս թթուածնի հետ խառնես , թթու մը առաջ կուգայ , ծծմբային թթու ³ ըսուած , որ զօրաւոր թոյն է , բնալրւծութեան և արհեստից՝ մանաւանդ մետաղագործութեան մէջ շատ կը գործածուի , և միւս զրեթէ բոլոր թթուները կը լրւծէ :

¹ Acide sulfureux.

³ Acide sulfurique.

² Θεῖτε:

Եթէ մէկ մաս ծծումբը մէկ մաս թթուածնի հետ միացնես , կ'ըլլայ թթու մը որ ծծմբուտ ջրածին՝ կ'ըսուի , ու սարսափելի թոյն է . ¹⁵⁰⁰ (1500 մասին մէկը) բաւական է թթու շուն մը սալաննելու , ¹ մասը ձի մը , և ¹ մասը մարդ մը կարող է մեռցը նել : Հոտը գարշելի է՝ դիակի ու աղբանոցի հոտին նման : Բնալրւծութեան մէջ առաջին գործածութիւնը այն է որ նիւթոյ մէջ մետաղ գտնուիլը կը ցուցնէ . զոր օրինակ մէկ կողմանէ կապարի լուծումունենաս , որուն մէջ էս զիտեր թէ կապար է թէ ուրիշ մարմին , եթէ նոյն լուծման մէջ ծծմբուտ ջրածինը լեցընես , իսկոյն մարմին մը առաջ կուգայ որ կապարի ծծմբակ ² կ'ըսուի , և գոյնը սե է . ուստի կը հասկըցուի որ մէջը կապար կայ : Դ յու ծծմբուտ ջրածինը կապարագոյն սե դիրտ մը կուտայ , մկնդեղի հետ գեղին , իստի հետ կարմրագոյն և այն :

(Ե ծումբը գլխաւոր մետաղներուն հետ սովորաբար խառն կ'ըլլայ , զոր օրինակ մնդիկի , երկաթի , պղնձի , կապարի , արծաթի , կրոյ , անագի , ծարիբի և այն . բայց շատ անգամ ալ գտնուիր . զոր օրինակ , երկաթը , արծաթը , անագը և այն շատ անգամ ալ ծծմբի հետ միացեալ չեն ըլլար :) Եթէ այս մետաղները ծծումբի հետ խառն ըլլան , իրենց զըտուիլը դիւրին կ'ըլլայ . որովհետեւ շատ ցնդական ըլլալով՝ միայն տաքցընելը բաւական է . վասն զի տաքութեամբ ծծումբը կը կորսուի և մետաղը կը զըտուի . բայց շատ անգամ կիրի կամ երկաթի կամ գայլախագի հետ տաքցընելու է , որպէս զի ծծումբը բոլորովին ցնդի , մետաղն ալ լաւ զուտ ըլլայ . զոր օրինակ եթէ կապար և երկաթ միանգամայն ծծումբի հետ միացեալ ըլլան , միայն տաքութեամբ զժուարէ մետաղները զըտել . անոր համար առաջ կը տաքցընեն , և կապարը կը զըտուի . յետոյ կիր կը նետեն որպէս զի երկաթը զըտուի : Դ մանապէս մնդէլ :

¹ Hydrogène sulfure. ² Sulfure de plomb.

ծծմբակը¹ լուծելու համար կը տաքցը-նեն, և հետը կիր կամ երկախ կը խառ-նեն, որպէս զի ծծումբը կրին կամ եր-կաթին հետ խառնուի, և մնդիկը բո-լորովն մաքրուի : “Ամանապէս եթէ մետաղաց ծծմբուաներու մէջ թթուա-ծին ալ գտնուի, այն ժամանակը քիչ մը ածուխ ալ կը նետեն մէջը՝ որպէս զի թթուածինը ածուխի հետ միանալով ցնդի, մետաղն ալ մաքրուր ըլլայ :

Ծծումբը երկրիս վրայ շատ տարա-ծուած է, մանաւանդ վառած կամ մա-րած հրաբուխ լերանց կողմերը շատ կը գտնուի . բնաւ օտար մարմնոց հետ բաղկացեալ չէ, այլ ’ի բնէ մինակ է, և հողի, կամ հերձաքարի հետ խառն է :

Ծծումբը զըտելու համար կերպ կերպ եղանակներ կան, բայց մեր զըտելու համար կամ մար-կարէ հասարակօրէն շատ տեղ կը գործածուի, և այս է : Ծծումբին մե-տաղը կ’առնես կը փշրես, հողէ կամ կապարէ մեծ թորանոցի մէջ կը դնես և քիչ քիչ հետ զչետէ կը տաքցընես . հողը կը հալի, ծծումբը կը ցնդի, և խողովակներով կուգայ կապարեայ սե-նեկի մը մէջ . այն սենեկին ուրիշ սե-նեկի մը մէջ կ’անցնի, այսպէս չորս կամ հինգ սենեակ կայ որ իրարու հետ կապարէ խողովակով կը հաղորդին . երբոր ցնդած ծծումբը վերջին սենե-կին մէջ կը հասնի, այն սենեկին յա-տակը ծուռ և վարի դին ծակ ըլլալով՝ ծծումբը կը թափի, և այն ծակէն դուրս կը վազէ թնդանօթի պէս : Եթէ ծծումբին հանքը հարուստ ըլլայ, մէկ թորումը հերիք է . այլ եթէ ըլլայ, երկու թորում ալ կարտղ ես ընել :

Ծծումբը հարկաւոր մետաղներու կարգը կը նայ սեպուիլ, վասն զի իւր առաջին օգուտը վառօդագործութեան մէջ գործածուին է . յետոյ վերսիշեալ երկու տեսակ թթուն շննելու կը գործ-ածէն . բնալուծութեան մէջ ալ շատ բանի օդտակար է :

¹ Sulfure de mercure.

ԲՈՒՍԱԲԱՌՈՒԹԻՒՆ

Անիլա :

Ա ԱՆԻԼԱՆ ազնիւ համեմներէն մէկն է, թէպէտ և շատը չեն զիտեր ասոր ինչ բոյս ըլլալը : Ա անիլիայի բոյ-սը Վիերիկային մէջաւեղուանկը հասա-րակածին տակը կը բուսնի . բայց այ-րեցած գոտիին տակ ընկած ամէն եր-կիրներն ալ իրեն չեն յարմարիր . աւե-լի ծովեզերեայ տեղուանկը, ուր որ ծո-վուն երեսէն անոյշ հովեր կը փշէն, ու դետերուն քովերը կը բուսնի, աղէկ ա-ռաջ գալուն համար ալ պէտք է որ բո-լորտիքը անտառներով պաշտպանուած ըլլայ :

Ա անիլիան ծլերան պէս՝ գէպ ’ի ի-րեն մօտ եղած ծառը կ’երկրնայ ու իր ճկուն ճիւղերովն ու ծիլերովը¹ անոր պլուերով ինչուան ծառին ծայրը կը հասնի քիչ ատենի մէջ, ու կանաչ զմբէթ մը կը ձեանայ : Ա անիլիային զինաւոր ցօղունները կանաչ են՝ մէկ մատի հաստութեամբ, մէջն ալ խր-ժային կպչուն հիւթ մը ունի . աս ցօ-ղունները ծունկ ծունկ են՝ եղէզի պէս . ամէն մէկ ծունկին տեղէն մէյմէկ տե-րեւ ու ծիլ կ’ելլէ . աս տերենները որչափ քիչ ըլլան՝ այնչափ խոշոր կ’ըլլան՝ եր-կայնութիւննին ինը տասը բթաշափ, իսկ լայնութիւննին իրեք չորս : Ձեւր-նին երկայն հաւկըթածէ է, ծայրեր-նին սուր, գոյներնին ազուոր կանաչ, կակուզ ու ողորկ ու գէպ ’ի երկայնքը ջղեր ունին . և որովհետեւ վրայի ե-րենին գոգաւոր է, անոր համար ջըր-հորդանի² կը նմաննին : Ծիլերը որթին ծիլերուն կը նմաննին, որ տերեններէն կարծ կ’ըլլան ու անոնց հակառակ կող-մէն բուսած, այսինքն տերենները ճիւ-ղերուն ան կողմը չեն բուսնիր՝ որ կող-մէն որ ծիլերով ծառերուն վրայ կը պլուի, հապա անոնց հակառակ կողմէն :

Ա անիլիային ծաղկընները իր շիտակ